

# ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1-12

ՅՈՒՆՈՒԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՃԻԲ. ՏԱՐԻ 2008

### ԱՍՈՐԵՐԷՆԻՑ ՓՈԽԱՌԵԱԼ ԿՐՕՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ԵՒ ԴՐԱՆՑ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սիլվա Պապիկեան

Հայերէնի՝ ասորական փոխառութիւններին անդրադարձել են Հ. Հիւբշմանը, Հր. Աճառեանը, Գ. Զահուկեանը, Լ. Յովհաննիսեանը, Ա. Փէրիխանեանը, Ն. Մկրտչեանը եւ ուրիշներ:

Հր. Աճառեանը Հայերէնի վրայ ասորական ազդեցութիւնը բաժանում է չորս շրջանի՝

1. նախնական շրջան, երբ ասորիները կազմում են Հայաստանի հարաւային նորանուաճ գաւառների ազգաբնակչութեան մեծամասնութիւնը եւ կամաց-կամաց ձուլւում են (ն.Ք. Ա դար).

2. քրիստոնէական քարոզչութեան շրջան, երբ Հայ Եկեղեցու պաշտօնեաների ծիսական լեզուն ասորերէնն է (Գ-Դ դդ.).

3. մատենագրական շրջան, երբ Եդեսիոյ դպրոցը հիւրընկալում է Հայ ուսանողներին, եւ ասորական եկեղեցական գրականութեան կարեւոր գործերը Հայերէնի են թարգմանւում (Դ-Ե դդ.).

4. անկման շրջան, երբ ասորիները, իրենց մեծութիւնն ու ազդեցութիւնը կորցրած, ապրում են Հայոց հետ ազգային ու կրօնական մօտիկ բարեկամական յարաբե-

րութեան մէջ՝ փնտրելով ու վայելելով Հայերի պաշտպանութիւնը (ՀԼՊ, 1, 335):

Ըստ Աճառեանի՝ ասորերէնից կատարուած փոխառութիւնների ընդհանուր թիւը 209 բառ է, որոնցից 120-ը գործածական են Հայերէնի բարբառներում կամ արդի Հայերէնում: Գ. Զահուկեանը այդ բառացանկից առանձնացնում է կապելայ, կոմս, մամոնայ, նափորոտն, սիւնհոդոս, մարանաթայ բառերը՝ գտնելով, որ այս բառերը ասորերէնը իր հերթին փոխառել է յունարէնից, այսինքն՝ այս բառերը միջնորդաւորուած փոխառութիւններ են:

Աճառեանի՝ բառացանկի մէջ կրօնական տերմինահամակարգին են պատկանում հետեւեալ բառերը՝ արեղայ, աղէն - եղեմ, առնակ, ատեսարոն - 4 միախառնուած Աւետարան, բուտ - կրօնական տեսուչ, դերի - վանք, Իբրամէն - Գիրք մնացորդաց, խարամանի - դեւ, ծոմ, մարանաթայ - նզովք, մծղնէայ - աղանդ, Ասծրացի - քրիստոնեայ, շարապայ - հորթ-կուռք, շուշփայ - մասունքի շոր, Պրակասաթայք - Գործք առաքելոց, սատանայ, սիդա - բուրվառ, սիւնհոդոս - ժողով, սերովրէ, քահանայ, քաղ-

դեպ (քաղեպ) - հմայող, քարոզ, քերովբե, քուեպ, քուրմ (25 բառ), (ՀԼՊ, 1, 336-342):

Այս բառերին կարելի է աւելացնել խորգ - քուրմ, քուսիթայ - կնգուղ, մամոնայ - սատանայ, մար - տէր բառերը:

Ջահուկեանը Հայ-ասորական յարաբերութիւնները բաժանում է երկու շրջանի՝

1. Հայ-ասորական՝ էթնիկական փոխազդեցութեան փուլ. ն.Ք. Բ դարից Բ.Յ. Բ դար. այս փուլում Հայերի եւ ասորիների շփումը տեղի է ունենում ինչպէս աշխարհազարկան Հարեւանութեան, այնպէս էլ քաղաքական սերտ յարաբերութիւնների պայմաններում.

2. ասորական կրօնա-քարոզչական եւ դպրոցական ազդեցութեան շրջան՝ Բ.Յ. Գ-Դ դդ. այս փուլում ասորիները, որպէս քրիստոնէութիւն ընդունած ժողովուրդ, լայն քարոզչութիւն են սկսում Հայաստանում, իսկ Հայերի՝ քրիստոնէութիւն ընդունելուց յետոյ ազդում Հայերէնի վրայ ինչպէս կրօնական-եկեղեցական բնագաւառում (Հայկական Եկեղեցում ծիսական լեզուներ են եղել ասորերէնը եւ յունարէնը), այնպէս էլ դպրոցական ուսուցման միջոցով (Չահուկեան, 476):

Ակադ. Գ. Ջահուկեանը (Չահուկեան, 475-485) նախազրային շրջանից ասորերէնից Հայերէնին անցած բառերի մէջ նշում է կրօնին եւ նախապաշարմունքին վերաբերող հետեւեալ բառերը՝ աբեղայ, ադէն, խարամանի, ծոմ, հեթանոս, մծղեպ, սատանայ, սրոյ(վ)բե, քերովբե, քարոզ, քահանայ, քուրմ, քուսիթայ, քաղդեպ, մաշկն - վրան, խորան (15 բառ):

Ջահուկեանը՝ հնարաւորինս առանձնացնում է վաղ արամէական եւ համեմատաբար ուշ շրջանի բուն ասորական փոխառութիւնները: Կրօնին վերաբերող վերոթուարկեալ բառերը բուն ասորական են. վաղ արամէական շրջանից կատա-

րուած փոխառութիւններ չեն արձանագրուած:

Լ. Յովհաննիսեանի՝ Ե դ. վկայուած ասորական բառերի ցանկում (88 բառ)՝ կրօնական բնոյթի են հետեւեալ՝ բառերը՝ խորգ, ծոմ, հեթանոս, սատանայ, սրովբե (սերովբե), քահանայ, քաղդեպ, քարոզ, քերովբե, քուեպ - հմայական քար, քուրմ, քուսիթայ - կնգուղ բառերը (12 բառ), (Յովհաննիսեան, 89-90):

Այժմ աւելի հանգամանօրէն անդրադառնանք այդ բառերին՝ նկատի ունենալով վերոյիշեալ դասակարգումները:

Աբեղայ.- փոխառութիւն ասորերէն՝ abila ձեւից, որ ասորերէնում ունէր «տխուր, տրտում» իմաստները: Բառը, ըստ Ջահուկեանի, Հայերէնին անցել է վաղնջահայերէնից: Այս բառը ՆՀԲ-ում բացատրւում է. «Հայր եղեալ կրօնաւորութեամբ, մոնոզոն. հրաժարեալ յաշխարհէ ուխտիւք եւ զգեստուք. միանձն. վանական» (ՆՀԲ, Ա, 2): Օրինակ՝ «Վաղ եղեր արեղայ: Գոհանար զարեղայէն» (օրինակներն՝ ըստ ՆՀԲ-ի):

Բառը հին Հայերէնում բաղադրութեան մէջ էր մտնում երկու ձեւով՝

արեղայ - արեղայական, արեղայակերպ, արեղայութիւն. եւ

արեղ - արեղութիւն, արեղաթաղ:

Ստ. Մալխասեանցի ՀԲԲ-ում բառը բազմիմաստ է եւ ունի հետեւեալ իմաստները՝

ա. Աշխարհական կեանքից հրաժարուած միայնակեաց կրօնաւոր.

բ. վանական կուսակրօն, կրօնաւոր.

գ. կուսակրօն քահանայ, որ յետոյ առանձին օրհնութեամբ ստանում է վարդապետի գաւազան (ՀԲԲ, 1, 2): Այս արմատից՝ կազմուած նոր բառեր են արեղաթող, արեղախոտ, արեղաձագ, արեղաճաշ, արեղուկ (արեղաձագ): Աղայեանի՝ ԱՀԲԲ-ում

նոր են արեղահալած, արեղահալածութիւն, արեղացու բառերը:

Հայ Եկեղեցում արեղայութիւնը կուսակրօն քահանայութեան ամենացածր աստիճանն է: Կուսակրօն քահանաները, երբ ստանում են վեղար, կոչւում են արեղայ: Նրանք ձեռնադրուած են եպիսկոպոսի կողմից:

Ադէն (ադիւն).- ասորերէն՝ aden ձեւից, որ նշանակում էր «դրախտ, եղեմ»: Հայերէնը Սուրբ Գրքի թարգմանութեան ժամանակ՝ եղեմը տառադարձել է յունարէնից, որն էլ, իր հերթին, տառադարձուած էր եբրայերէն eden բառից: Եբրայերէն բառը համապատասխանում է արաբերէն ախորժեյի կեանք, հաճոյք բառերին, դրա համար էլ Սուրբ Գրքում երբեմն եղեմը թարգմանուած է դրախտ փափկութեամբ: Օրինակ՝ «Եւ առ Տէր Աստուած զմարդն զոր արար, եւ եղ զնա ի դրախտին փափկութեան գործել զնա եւ պահել» [Մն. Բ 15]:

Աշխարհաբարում թարգմանուել է բերկրութեամ դրախտ: Օրինակ՝ «Տէր Աստուած իր ստեղծած մարդուն տեղաւորեց բերկրութեան դրախտում, որպէսզի սա մշակի ու պահպանի այն» (Աստուածաշունչ, 1999):

Եղեմ բառը Բառարան Սուրբ գրոցում բացատրւում է. «Անուն ասիական գաւառի յորում էր դրախտը» (ԲՄԳ, 151): Այս բացատրութեանը տարբեր մեկնութիւններ են տրուել: Եղեմը, որ, ըստ Աստուածաշնչի, բերկրութեան վայր էր, գտնուում էր Արեւելքում: Սրանից ելնելով՝ շատերը եղեմը կամ դրախտը գետեղում են Հայաստանում, միւսները՝ այլ վայրերում: Սակայն այդ հարցը այդպէս էլ լուծուած չէ:

Եղեմ արմատը, ըստ ՆՀԲ-ի, նշանակում է «փափկութիւն. տեղի դրախտին եւ դրախտն» (ՆՀԲ, 646): Այս արմատից կազմուած նշուած են՝ եղեմաբուղիս (եղեմաբուլիս), եղեմածին, եղեմական, եղեմահիւս,

եղեմային, եղեմատունկ բառերը: Ըստ Մալխասեանցի՝ «ա» փափկութեան դրախտը, որի մէջ, ըստ կրօնական աւանդութեան, նախաստեղծներն ապրում էին մինչեւ մեղանչելը. ք) փխբ. վայելչութեան տեղ»: Եղեմ բառը դրախտ նշանակութեամբ գործածուում է ժամանակակից Հայերէնում: Այն ոչ միայն կրօնական տերմինահամակարգին է պատկանում, այլեւ գործածուում է որպէս համագործածական բառ: Ադէն ասորերէնից փոխառեալ բառը աշխարհաբարեան փուլում չի գործածուում. գրաբարում էլ նրա գործածութիւնը յաճախական չէ:

Առնակ.- փոխառութիւն է ասորերէն harnaga բառից, որ նշանակում էր շնագայլ: Բառը ՆՀԲ-ում վկայուած չէ: Առնակ բառը բացատրւում է՝ «երեւակայական ոգի կամ չար դեւ, որ հոգիներն առնում է՝ գրող, կրող» (ՀԲԲ, 1, 230): Ըստ Աճառեանի՝ harnaga՝ ասորերէն բառը Հայերէնում պիտի դառնար յառնագ, բայց «Հայ բերանների մէջ Հայաձեւ կերպարանք է ստացել» (ՀԱԲ, 1, 261):

Այս բառին եւ նրա ծագմանը անդրադարձել է Լ. Ղեւոնդ Ալիշանը «Հայոց հին հաւատքը կամ հեթանոսական կրօնը» աշխատութեան մէջ: «Ոգեղէններ» գլխում՝ նա գրում է. «Այն հին ժամանակներում, բացի քաջքերից ու նրանց նմաններից, հաւանօրէն կար առնակ կոչուած հոգեհան մի ոգի»: Նա բերում է օրինակը Պրոխորոնի գրուածքից, որտեղ Կինոպաս անունով կախարդը ասում է. «Առաքեմ Առնակ չարի տուն՝ յորումէ, եւ պահանջեմ զհոգի նորա ի նմանէ» (Ալիշան, 118-119): Ալիշանը եզրակացնում է, որ ինչպէս Գրողը, որ տանում է հոգիները, այնպէս էլ Առնողն է տանում հոգիները, եւ առնակն ու գրողը կամ չար հրեշտակը նոյնանում են: Ալիշանը բառի ծագումը կապում է առնել բայի հետ եւ առնակը եւ գրողը համարում է հոմանիշներ: Առնակ արմատից կազմուած

բառերը գործածվում են հայերէնի բարբառներում՝ առնակաւոր (կատաղի շուն, չար), առնակային, առնակաշուն (Վանի բարբառ):

Վանի բարբառում առնակաշուն բառի առկայութիւնը կասկածելի է դարձնում առնակ բառի ասորական ծագում ունենալը: Աւելի հաւանական է թւում առնել բայի հիմք +ակ վերջածանցով կազմուած կառոյցը, այսինքն՝ առնող-տանող (չար ոգի):

Ատեսարոն.- Այս բառը սխալ ընթացման հետեւանք է: Խօսքը վերաբերում է Տատիանոս Ասորու (Ք.յ. Բ դ.) կազմած սուրբագրական առաջին համաբարբառին: Վերջինս ձեռնամուկ էր եղել չորս Աւետարանների բնագրերը իրար հետ համեմատելու քննական աշխատանքին (փաստօրէն աւետարանական համաբարբառ կազմելու առաջին փորձն էր): Յունալատինական աղբիւրներում Տատիանոսի կազմած այս բնագրին տրւում է diatessaron անունը, որը գալիս է յունարէն տօ τεσσαράων εὐαγγέλιον քերականական արտայայտութիւնից, որը նշանակում է Աւետարանի չորից, այսինքն՝ Աւետարան, որը կազմուած է չորս Աւետարանների միջոցով: Ասորական աղբիւրներում եւս օգտագործւում է յունական ծագում ունեցող diatessaron բառը, բայց նրա բուն ասորական անուանումն է evangelion da-mēhallētē<sup>2</sup>, որ նշանակում է «միախառնուածների (խառն բնագրերի) Աւետարան, այսինքն՝ մի բնագիր, որի մէջ չորս Աւետարանները միախառնուած էին՝ համաբան ու համաբարբառ, եւ այս առումով էլ այս անուանումը հայացուել էր համաբարբառ Աւետարան՝ ձեւով: Տատիանոսի կազմած այդ Աւետարանի մեկնութիւնը գրել է Եփրեմ Խուրի Ասորին, որը Ե դ. թարգմանուել է հայերէն եւ կրել «Մեկնութիւն Աւետարանի համաբարբառ, զոր արարեալ է տեառն Եփրեմի Խուրին Ասորոյ»<sup>3</sup>: Հայ թարգմա-

նիչը ասորերէն բառի բառասկզբի ձ-ն համարել է նախամասնիկ եւ հանել այն:

Բուտ.- փոխառութիւն է ասորերէն bud բառից՝ եկեղեցու տեսուչ նշանակութեամբ: ՆՀԲ-ն այս բառի հետ նշում է նաեւ էրուտ ձեւը՝ համարելով ուսմակական: Բուտ բառը գործածուած է Մխիթար Գօշի Դատաստանագրքում (ԺԲ դ.):

Հր. Աճառեանը, յղելով Ն. Մառին, նշում է, որ բառը է դարից է եւ 4 անգամ գործածուած է Բագարանի արձանագրութեան մէջ, եւ արձանագրութիւնից պարզ է դառնում, որ այն յատուկ անուն է: Ասորերէնում էլ այն յատուկ անուն է եղել, ինչպէս հայերէնում. այդպէս էր կոչուած Գալիլակ եւ Դիմնակ առականների գրքերի ասորի թարգմանիչը (ՀԱԲ, 1, 487):

Դերի.- ասորերէն दौरա - վանք բառից: Բառը պահպանուած է որոշ բարբառներում՝ Ախալցխայ, Կարին. ընդ որում, բառը բարբառներում որոշակի իմաստային փոփոխութեան է ենթարկուել: Այն ստացել է խաղերով ու պարերով ուխտագնացութիւն դէպի վանք, գիղական տօնախմբութիւն իմաստները: Բառն ունի նաեւ մի տեսակ պար իմաստը (ՀԲԲ, 1, 507): Դերի բառը ՆՀԲ-ում վկայուած է դերամիկ ձեւով, որ բացատրուած է՝ «Տէրունի կամ համառօտեալն բառիս Անդրանիկ» (ՆՀԲ, Ա, 610): Այս արմատից է Դերանիկ (Դերանիկ) յատուկ անունը՝ «Գրիգոր՝ անուանեալն դերանիկ, որ թարգմանի ուխտիւք խնդրեալի Տեառնէ» (օրինակն՝ ըստ ՆՀԲ-ի):

Իբրամէն.- փոխառութիւն ասորերէն՝ dibre-yomin բառից: Այդպէս անուանում է Եփրեմ Ասորին Մնացորդաց գիրքը: Այս բառը չկայ ՆՀԲ-ում: Իբրամէն բառի՝ մասին որոշ տեղեկութիւններ է տալիս Հ. Ա. Վարդանեանը (ՀԱ, 1912, 546): Անդրադառնալով Եփրեմ Ասորու հայերէն մեկնութիւններին՝ նա որոշ դիտարկումներ է անում: Նա գրում է. «Դիտողութիւն մըն ալ Իբրամէն ընթացուածի մասին. ինչպէս

Եբրայական նոյնպէս ասորի Ս. Գիրքը Մնացորդաց մատեանը կը կոչեն Դիբրէնովմին (verba aut res gestae dierum), մեր նօտրագրած իմաստով առած է Եփրեմի թարգմանիչը ասորի բառը... ամէնը ասորերէն օրի յոգնակին է անշուշտ, իսկ իբրը բնաւ իմաստ չունի, այս պատճառաւ թոյլ կու տամ ինծի ուղղագրութիւն մը փորձել եւ իբրը ընթեռնուլ դիբր, որով կ'ունենանք դպրութիւն Դիբրամենու, որ է բառական վարումն ատրց»։ Աճառեանը համամիտ է Վարդանեանի հետ եւ գտնում է, որ իբրամէն բառը պէտք է ուղղել՝ դերամէն կամ դիբրամէն (ՀԱԲ, 2, 237):

Խարամանի.- փոխառեալ է ասորերէն xaramana բառից, որ նշանակում էր դէս, սատանայ, չար օձ: ՆՀԲ-ն բառը կապում է պարսկերէն Ահրիման աստծոյ անուան հետ. «Չար աստղածն համարեալ առ պարսիկս: չար հրեշտակ. դեւ, սատանայ. որպէս պատճառ ամենայն չարեաց եւ կարծեցեալ չար իրաց» (ՆՀԲ, Ա, 990): Օրինակ՝ «Ի դիւաց խարամանոյ խաբեալ» (Յղիշէ, 64):

Այս բառի մասին դիտարկումներ ունի Հ. Վարդանեանը (ՀԱ, 1922, 586): Նա գտնում է, որ բառի ուղիղ ձեւը խարամանն է, իսկ խարամանի կամ խարամանոյ սեռական ձեւը: Բերում է օրինակ Եզնիկի հետեւեալ նախադասութիւնը. «...այլ թէ Արհմնն չար կարծիցի նոցա, վասն զխարամանի անունն յանձին կրելոյ, առ ի յարեւէ զարեգակնատենչիկսն արկանելոյ, ուստի եւ զանունն իսկ զխարամանոյ առ»։ Եզնիկի միւս նախադասութիւնը՝ «Որպէս մոգք խաբին, թէ Խարամանն արար զչարիս» (Եզնիկ, 111) հաստատում է Վարդանեանի կարծիքը:

Հեթանոս.- ըստ Աճառեանի՝ ասորերէն htnos բառից է փոխառեալ՝ օտարագի նշանակութեամբ, որն էլ, իր հերթին, յունարէն ἕθνος ժողովուրդ, ցեղ բառից է փոխառեալ: Զահուկեանը այս բառը զետեղել է ասորա-

կան փոխառութիւնների ցանկում (Զահուկեան, 478): ՆՀԲ-ն բառը փոխառութիւն է համարում յունարէնից՝ լծորդելով ազն բառի հետ՝ հետեւեալ բացատրութեամբ. «Որ ոչն էր երբեմն յազգէ հրէից. օտարագի, այլազգի. այլակրօն, անհաւատ, բարբառոս» (ՆՀԲ, Բ, 80): Այս արմատից ՆՀԲ-ում հետեւեալ բառերն են՝ հեթանոսաբար, հեթանոսաբարոյ, հեթանոսակամ, հեթանոսամիտ, հեթանոսանալ, հեթանոսութիւն, հեթանոսօրէն: Ըստ Բառարան Սուրբ գրոցի՝ «Հրէայք այս անունը կու տային այն ամէնուն, որ ընդունած էին Մովսիսի օրէնքը» (ԲԱԳ, 298): Այսպէս, Պօղոս առաքեալին անուանում էին առաքեալ հեթանոսաց, քանի որ նա հիմնականում հեթանոսներին քարոզեց ի հակադրութիւն Պետրոսի եւ միւս առաքեալների, որոնք քարոզեցին հրեաներին եւ անուանուեցին առաքեալք թլիփատութեան: Բերենք օրինակներ՝ «Եւ զգաւիթն որ արտաքոյ տաճարին՝ թող զնա եւ մի՛ չափեր, զի տուեալ է զնա հեթանոսաց» [Յայտ. ԺԱ 2]: «Դատի զհեթանոսս եւ բազում առնէ զհարուածս, եւ խորտակեացէ զգլուխս բազմաց յերկրի» [Սաղմ. ձԹ 6]: «Զգորութիւն գործոց իւրոց պատմեաց ժողովրդեան իւրում, տալ նոցա զժառանգութիւն հեթանոսաց» [Սաղմ. ձԺ 6]: Աւելի ուշ հայերը հեթանոս են անուանում ոչ քրիստոնեաներին, յատկապէս՝ կոպալաշներին. օրինակ՝ հեթանոս ազգեր, հեթանոսական շրջան: Բառն ունի նաեւ փոխաբերական գործածութիւն՝ բարբառոս - անօրէն նշանակութեամբ (հմմտ. հեթանոս մարդ): Ժամանակակից հայերէնում հեթանոս արմատից կազմուել է հեթանոսերգութիւն բառը՝ հայոց հին՝ մինչքրիստոնէական կեանքը, կենցաղը երգելը (հմմտ. Դանիէլ Վարուժան, Հեթանոս երգեր):

Մոմ.- փոխառութիւն ասորերէն som (soma) բառից, որ նշանակում է «օրական միայն մէկ անգամ ուտելով պահք»։ Օրինակ՝ «Մոմ պահեցին, քուրձ ու ցնցոտի հագան, մոխիր ու հող վերցրին, ածեցին ի-

րենց գլխին, պատառոտեցին օձիքները» [Ա Մակ. Գ 47]: Ըստ ՆՀԲ-ի՝ «Պահգ խիստ եւ անսուղ՝ միանգամ ճաշակելով յաւուրն, որ ի Սուրբ գիրս հասարակօրէն թարգմանի ի մեզ պահգ» (ՆՀԲ, Ա, 1023): Այս արմատից են՝ ծոմել, ծոմանալ, ծոմական, ծոմապահք, ծոմապահութիւն, ծոմաշան բառերը: Մալխասեանցի բառարանում արձանագրուած է ծոմբաց բառը «այն օրը, երբ դադարում են այլեւս ծոմ պահել» (ՀԲԲ, 2, 348): Ծոմ բառը Սուրբ Գրքի մէջ թարգմանուած է պահք եւ միայն մէկ անգամ է գործածուած:

Ներկայումս նոյնացուած պահք եւ ծոմ բառերը՝ նախկինում տարբեր իմաստներ էին արտայայտում:

Ծոմը նշանակում է ընդհանրապէս կերակուր չուտել, իսկ պահքը՝ մտից հրաժարուել:

Մարանաթա.- սա նզովքի բանաձեւ է, որ մէկ անգամ գործածուած է Նոր Կտակարանում «Եթէ ոչ ոք սիրէ զՏէր Յիսուս, եղիցի նզովեալ. Մարանաթա» [Ա Կոր. ԺԶ 22]: Բառի բացատրութիւնը ՀՀԲ-ում հետեւեալն է. «է սա երկու բառ՝ խառն ի բարբառոյ՝ եբրայեցեաց եւ ասորեաց. վասնզի ընթերցեալ լինի այսպէս՝ մարան աթա, որ թարգմանի՝ Տէր մեր գալ: Եւ զայս եբրայեցիք՝ բազում անգամ ի գործ ածէին ի նզովելն կամ ի յանիծանելն զոք, որով դիտէին ասել՝ Տէր եկեցցէ դատել եւ պատուհասել զքեզ» (ՀՀԲ, 1749): Ասորերէն *maran-ata* արտայայտութիւնը Աստուածաշնչի թարգմանութեան ժամանակ տառադարձուել է հայերէն: Յունարէնում նոյնպէս պահպանուել է այդ անէծքի բանաձեւը: ՆՀԲ-ի բացատրութիւնը համարեա համընկնում է ՀՀԲ-ի բացատրութեան հետ. այստեղ աւելացուած է՝ «մարանաթա, այսինքն՝ Տէր գալ, մի անյոյս լինիք, եւ ըստ արժանեացն հասուցանէ» (ՆՀԲ, Բ, 217):

Մծղնեայ.- ասորերէն՝ *mysallyyane* բառից, մեսաղեան - աղօթական կոչուած

քրիստոնէական աղանդ էր: Բառը ասորերէն (արամերէն) *seluta* - աղօթող արմատից է (ՀԱԲ, 3, 330): Փոխաբերական իմաստով նշանակում է պիղծ, զազիր, զգուելի: ՆՀԲ-ն բառը բացատրում է՝ «պիղծ, պղծագործ, փծագործ որպէս պաղղիկեանք, բորբորիտք, թոնդրակեցիք, սողոմայեցիք» (ՆՀԲ, Բ, 284): Այս բառից են մծղնեացի, մծղնի, մծղնագործութիւն, մծղնութիւն բառերը:

Մծղնեութիւնը քրիստոնական աղանդ էր, որ ծագել էր Միջագետքում, ապա տարածուել Ասորիքում, Եգիպտոսում, Հայաստանում Դ-Ե դդ.: Այս աղանդը տարածուել է Հայաստանում եւ ընդգրկել ոչ միայն աշխարհականների, այլեւ հոգեւորականների շրջանակը: Աղանդի հետեւորդները խիստ մարմնական պատիժների են ենթարկուել, ճակատներին աղուեսադրոշմ է խարանուել, երեխաներին հեռացրել են ծնողներից եւ յանձնել հոգեւորականների խնամքին: Հայ մատենագրութեան մէջ նրանց մասին ուղղակի տեղեկութիւններ չկան, այլ նրանց մասին լուտանքներ են: Այսպէս, Եզնիկ Կողբացին նրանց մասին գրում է. «Չամուսնութիւնն սուեալ յԱստուծոյ՝ պղծութիւն համարիցին, որպէս Մարկիոնն եւ Մանի եւ մծղնեայք» (Եզնիկ, 287): Այսինքն՝ այս նախադասութիւնից պարզ է դառնում, որ մծղնեութիւնը մերժում էր ամուսնութիւնը:

Մծղնեների գլխաւոր շեղումը քրիստոնէութիւնից այն էր, որ նրանք արհամարհում, մերժում էին եկեղեցական խորհուրդներն ու առհասարակ եկեղեցական աստուածապաշտութիւնը: Նրանց համար իսկական կրօնական խորհուրդը աղօթքն էր: Աղօթքը բաւական էր բոլոր մեղքերից ազատուելու համար<sup>4</sup>: Նրանց մասին ահա թէ ինչ է գրում «Կանոնագիրք Հայոց»-ը. «...բազմանային որք յաճախէին ի գործս պղծութեան... եւ ոչ ոք էր, որ քաղէր զո-

րոմն եւ սրբէր զգաղճն վնասակար, քանզի արմատացեալ էր սէզն եւ տարածանէր օր ըստ օրէ. լինէր յաճախումն մծղնէից եւ այլոց չարեաց՝ կնահանէից, պոռնկաց, գողոց, ամենայն խոտորնակ չարագործաց յաշխարհիս Հայոց, ի մէջ տանս Թորգոմայ, եւ լինէր սուգ եւ տրտմութիւն: Որք էին ի ժամանակին նախանձախնդիր վարդապետք, եպիսկոպոսք, երիցունք, որք ունէին զուխտ սրբութեան, պաշտօնեայք Քրիստոսի եւ մանկունք սրբոյ Եկեղեցոյ, այլեւ յուխտէ քահանայիցն ոչ գնային ըստ սրբութեան արդար ճանապարհին»<sup>5</sup>: Ահա այս հակաբարոյական արարքների համար մծղնեութիւն բառը ստացել է պիղծ իմաստը՝ կորցնելով իր սկզբնական աղօթող իմաստը:

Հետագայում մծղնեութիւնը համեմտուել է թոնդրակեան աղանդի հետ:

Հաւանաբար, կարող ենք արձանագրել բառիմաստի շրջում:

Նածրացի.- ասորերէն *nasraya* բառից, որ՝ նշանակում էր քրիստոնէայ: ՆՀԲ-ն այս գլխաբառի բացատրութիւնը յղում է Ազարացի եւ Ազարիցի բառերին, իսկ Ազարիցի բառի բացատրութիւնն էլ յղում է ուխտաւոր բառին: Վերջինս բացատրում է. «Ուխտաւոր. որպէս՝ նազովրեցի. եբր.՝ նազիր, նեծիր. որ եւ նուիրական. սրբեալ. աղօթական. ընծայաբեր» (ՆՀԲ, 2, 543):

Նազովրեցի բառը Նոր Կտակարանում հանդիպում է Յովհաննէսի աւետարանում. «Գրեաց եւ տախտակ մի Պիղատոս, եւ եղ ի վերայ խաչին. եւ էր գրեալ. Յիսուս Նազովրեցի, Թագաւոր հրեից» [Յովհ. ԺԹ 19]: Հայերէնում այն ստուգաբանում է որպէս նազարէթցի: Ռուսերէնում այս նախադասութիւնը այսպէս է. "Пѣлат же написал и надписъ и поставил на кресте. Написано было Иисус Назорей, царь Иудейскій" (Иоан. 19.19): Նազարէթ տեղանունը բազմիցս գործածուած է Նոր Կտակարանում եւ քաջ յայտնի էր մեր թարգմանիչներին,

սակայն նրանք օգտագործել են Ազարիցի բառը: Այդպէս է նաեւ ռուսերէնում ու յունարէնում:

Նազովրեցի բառի մասին ուշագրաւ դիտողութիւններ ունի Կ. Դալլաքեանը: Նա իրաւացիօրէն գտնում է, որ Ազարիցի բառը համապատասխանում է յունարէն Ազարայոս եւ ռուսերէն *назорей* բառերին եւ նշանակում է Աուիարեքուած Աստուծո՞՛: Հեղինակը զուգահեռ է անցկացնում Հին Կտակարանից Սամփոսին նուիրուած հատուածի հետ, որտեղ հայերէնում արձանագրուած է ուխտաւոր բառը. «Չի ահա յղացիս դու եւ ծնցիս որդի, եւ երկաթ մի՝ ելցէ ի գլուխ նորա. զի ուխտաւոր Աստուծոյ եղիցի մանուկն անդստին յորովայնէ» [Դատ. ԺԳ 5], ռուսերէն թարգմանութեան մէջ՝ "Ибо вои, ты зачнешь и родишь сына, и бритва не каснется головы его, потому что от самого черва младенечъ сей будет назорей Божий" (Суд. 13.5):

ՀՀԲ-ն ուխտաւոր բառի բացատրութեան մէջ գրում է. «Ըստ այսմ էին եւ ի հին օրէնս ոմանք ի բարեպաշտ արանց, որք ուխտիւք նուիրեալ զանձինս իւրեանց Տեառն հրաժարէին ի գինւոյ... եւ ոչ սափրէին զգլուխս իւրեանց: Եւ ի սոցանէ ոմանք ընծայեալ լինէին մշտնջնաւոր ուխտիւ. որպիսի էր Սամուէլ եւ Սամփոսն» (ՀՀԲ, 853):

Ժամանակի ընթացքում Ազարիցի բառի իմաստը փոխուել է եւ նոյնացուել Ազարիցի բառի հետ: Նազովրեցի բառի արմատը համապատասխանում է յունարէն Ազար բառին: Այստեղից հետեւում է, որ Պիղատոսի մեղադրանքի մէջ կարեւորում է ոչ թէ Քրիստոսի որտեղացի լինելը, այլ նրա առաքելութիւնը: Աստուածաշունչ մատենանի Հայ թարգմանիչները ճիշտ են թարգմանել բառը՝ նկատի ունենալով ուխտաւոր բառի ուխտաւոր, ընծայաբեր իմաստները:

Ծարապալ.- ասորերէն erapa բառից՝ աթար / կովի թրիք նշանակութեամբ: Այս բառը ունի միայն Երեմիա Մեղրեցին: Բացատրուում է «որթայ պատկեր» (Մեղրեցի, 244): Սա անարգական արտայայտութիւն է ոսկէ հորթի նկատմամբ, որին պաշտում էին եգիպտացիները եւ նրանց օրինակով՝ եբրայեցիները: Յիշենք անապատում հրեաների՝ հորթին աստուածացնելը: Թուում է՝ բառի նախնական իմաստը բոլորովին կապ չունի հորթի հետ: Բայց նկատի ունենալով քրիստոնեաների վերաբերմունքը հեթանոսութեան նկատմամբ՝ բառը կարող էր իմաստային փոփոխութեան ենթարկուել եւ ստանալ վիրաւորական, անարգական երանգ:

Շուշփայ (շուշպայ).- ասորերէն sussep - գլխի ծածկոց, քօղ բառից: Այս բառը հետագայում ստացել է սկիհը մաքրելու շոր, սրբոց, մասունքների պատանք իմաստները: ՆՀԲ-ն բացատրում է. «Մաքուր կտաւ որպէս սնդոն սուրբ սեղանոյ, եւ որպէս մաքրիչ սկհոյ. շուշփայք, որ են գորփօրայքն» (ՆՀԲ, Բ, 491): «Առցեն գշիշա ծածկեալ պրիսմեղէն շուշփայիւքն» (օրինակն՝ ըստ ՆՀԲ-ի):

Հայերէնի մի քանի բարբառներում այս բառը ստացել է աւան իմաստը: Վանի բարբառում կայ նաեւ շուշփայել բայը՝ մասունքը, խաչը շուշփայի մէջ փաթաթել, եւ շուշփացու գոյականը՝ կտոր, որից սկիհի համար շուշփայ են պատրաստում:

Պրակսաւաթայք (պրակսաւաթայք, պրակսաւաթայք).- ասորերէն prqstn բառից, որը տառադարձուած էր յունարէն πρακσεισ αυτων (prakseis auton), որը բացատրուում է՝ «գործք նոցա. զանվաւերական պատմութիւնս առաքելոց արտաքոյ սուրբ գրոց» (ՆՀԲ, Բ, 665): Յունարէն գործք նոցա՝ կապակցութիւնը տառադարձուել է ասորերէն, ապա ասորական թարգմանութեան միջոցով անցել հայերէնին: Այս կա-

պակցութիւնը գործածուած է Եւսեբիոս Կեսարացու Պատմութիւն եկեղեցւոյում:

«Պրաքս աւաթեայքն, որ կոչի թէ Պողոսի են, կարծիք երկմտութեան են վասն նոցա» (օրինակն՝ ըստ ՆՀԲ-ի): Մալխասեանցի բառարանում բառը բացատրուում է՝ որպէս «Հին եւ Նոր Կտակարանների անվաւերական գրքեր» (ՀԲԲ, 4, 127):

Սատանայ (սատանա).- այս բառը ասորերէն sã ēā nā բառից է փոխառեալ՝ հակառակ, դիմակաց, չար ոգի, դէ նշանակութեամբ: Ասորերէն բառն էլ փոխառուած է եբրայերէն satan - հակառակորդ բառից: Այս բառի ծագման մասին գրել է Եզնիկը. «Սատանայ յեբրայեցւոց եւ յասորւոց լեզու՝ խոտորեալ թարգմանի» (Եզնիկ, 52): Օրինակներ՝ «Երթ յետս իմ, Սատանայ, գայթակղութիւն իմ ես» [Մատթ. ԺԶ 23]: «Վասն որոյ նախանձու սատանայի ապականեալք հնացան ի բանսարկութիւն խարդախութեան պատրանացն» (Բուզանդ, 69): «Եւ ոչ եղեւ ի նմա դամագիւտ սատանայ» (Խորենացի, 295): «Չարասէրն սատանայ իբրեւ զգօրավար ի մէջ նոցայ երեւէր» (Յղիշէ, 51): ՆՀԲ-ի բացատրութեամբ՝ «սեպհականեալ անուն է դիւի, եւ մանաւանդ գլխոյ դիւաց, որ եւ սաղայէլ, բանսարկու» (ՆՀԲ, 2, 698):

Սատանային տարբեր բնորոշումներ են տրուել Աստուածաշնչում: Նրան անուանել են՝ վիշապ, հիմ օձ [Յայտ. Ի 2], չար [Ա Յովհ. Ե 18], մարդասպան, ստի հայր [Յովհ. Ը 44], բէեղգեբուղ [Մատթ. ԺԲ 24], բելիար [Ա Կոր. Զ 15], այս աշխարհի ստտուածը [Բ Կոր. Դ 4]:

Այս բառը հանդէս է գալիս նաեւ սատան տարբերակով «հակառակորդ, ապստամբ, չարախօս, մատնիչ» իմաստով: Օրինակ՝ «Եւ յարոյց Տէր սատան Սողոմոնի զՌագոն զորդի Եղիադայ, որ փախեալ յԱղբատգարայ արքայէ Սուբայ ի տեառնէ իւրմէ» [Գ Թագ. ԺԱ 23]: «Եւ զի մի առաւելութեամբ յայտնութեանցն հպարտա-

ցայց, տուաւ ինձ խայթ մարմնոյ, հրեշտակ Սատան, կռփել զիս, զի մի՛ հպարտացայց» [Բ Կոր. ԺԲ 7]:

Այս արմատից են՝ սատանայագեաց (սատանայակիր), սատանայագէն, սատանայախօս, սատանայակամ, սատանայակոր, սատանայամիտ, սատանայանալ, սատանայոտ, սատանայութիւն բառերը:

Սատանան, սկզբնապէս լինելով Աստծոյ հրեշտակներից մէկը եւ նախանձելով Աստծուն, ցանկանում է նրան հաւասարուել: Նա ապստամբում է Աստծոյ դէմ իր համախոհների հետ միասին: Ահա թէ ինչ է գրում Գ. Տաթեւացին. «...բոլոր հրեշտակական էութիւնները տեսան Բանին (Աստծոյ խօսքին՝ Որդուն) Ադամի կերպարանքով, ու երկրպագեցին, օրհնեցին, մինչդեռ սատանան չերկրպագեց... չարացրեց (հրեշտակների) վերին դասերին՝ զայրոյթով, եւ ներքին դասերին՝ սասանմամբ, եւ համակամներին իր կողմը քաշեց, այլեւ մեր նախնիներին (Ադամին, Եւային) խաբեց եւ չարացրեց»<sup>7</sup>:

Բառարան Սուրբ գրոցը բացատրում է. «Ինկած՝ հրեշտակներէն մին, մանաւանդ անոնց գլուխը: Աշխարհի՛ վրայ գլխաւոր պատճառ է չարեաց՝ սատանայ, եւ անոր մեծ նպատակն է հակառակել բարւոյն զոր կ'ուզէ ընել Աստուած» (ԲՄԳ, 484):

Մալխասեանցի բառարանում այս բառը բազմիմաստ է. ունի հետեւեալ իմաստները՝ ա. հակառակորդ, դիմադիր, բ. չար ոգի, դեւերի իշխան, Սադայել, գ. սարդ, մամուկ, դ. փխբ.՝ ճարպիկ, հնարագետ, ե. տգեղ, այլաճակ: Ինչպէս տեսնում ենք, բառի հիմնական իմաստին աւելացել են նոր իմաստներ եւ նոյնիսկ այն փոխաբերական գործածութիւն է ձեռք բերել: Մալխասեանցի բառարանում նոր բառեր են սատանայապաշտ, սատանայասէր, սատանայաւոր: Աղայեանի բառարանում յաւելուած են՝ սատանայապար, սատանայապետ, սատանորդի, սատանայախար (սա-

տանայախար լինել) բառերը: Բազմաթիւ են սատանայ արմատով կազմուած դարձուածքները՝ սատանայ խաբող (խորամանկ), սատանայի ծիծ ծծել (խաբել), սատանին թարս նստել (հակառակել), սատանին թարս նալել (նենգ լինել), սատանի ալանջը խուլ (սատանան չիմանայ), սատանի պոչ (չատ խորամանկ), սատանի պիպել (չարածճի), սատանի քամի (պտտահողմ), սատանի կծիկ (զորդեան հանգոյց), սատանի խելք (հնարագիտութիւն), սատանի ծոցը (գրողի ծոցը), սատանի պէս (թարսի պէս) եւ այլն:

Ի դէպ, սատան-ով կազմուած դարձուածքները աւելի շատ են, քան սատան-ով կազմուածները, այսինքն՝ ժողովրդախօսակցական լեզուում սատան տարբերակը հոգեհարազատ է ժողովրդին, բնականաբար եւ կիրառութիւնը աւելի շատ:

Սիդա.- ՆՀԲ-ն չունի: Աճառեանը համարում է նորագիւտ բառ, որ գործածուած է Ներսէս Լամբրոնացու Մեկնութիւն սրբոց երկոտասան մարգարէիցում (Պոլիս, 1825)՝ «Զի այրեցին նոքա զոսկերս թագաւորին Եղովմայեցւոց ի սիդա (այսինքն՝ ի բուրվառ)» [Ամովս Բ 1]: Այս բառը ասորերէն՝ saida (sida) բառից է, որ Աստուածաշունչի գրաբարեան տեքստում հետեւեալն է. «Այսպէս ասէ Տէր. Ի վերայ երից ամպարչտութեանցն Մովաբու, եւ ի վերայ չորիցն՝ ոչ դարձայց ի նմանէն, փոխանակ զի այրեցին զոսկերս թագաւորացն Եղովմայեցւոց ի մոխրել» [Ամովս Բ 1], (Կ.Պոլիս, 1895): Աշխարհաբար թարգմանութեամբ այդ հատուածը կը լինի. «Այսպէս է ասում Տէրը՝ Մովաբի երեք ամբարչտութիւնների մանաւանդ չորրորդի համար ես պիտի պատժեմ նրանց, քանի որ նրանք այրեցին եղովմայեցիների թագաւորների ոսկորները, մինչեւ որ դրանք մոխիր դարձան» (Աստուածաշունչ, Ս. Էջմիածին, 1999):

Սիդա բառի բուրվառ նշանակութիւնը ահա թէ ինչպէս է բացատրում Աճառեան-



491-2008

նը. «Այս բառը (սիդա - Ս. Պ.) ասորերէն եւ եբրայերէն նշանակում է կիր եւ «այրեցին. զոսկերս ի կիր» ասելով՝ հասկացւում է, թէ «ոսկորները այնպէս այրեցին, որ կիր կամ մոխիր դարձրին»: ...Սակայն մեկնիչներէց ոմանք ի կիր ասելով՝ հասկացել են, թէ ոսկորները կրի մէջ դնելով այրեցին: Անշուշտ այսպէս է հասկացել Լամբրոնացու աղբիւրն էլ եւ, ասորի ու եբրայական բառը պահելով, գրել է՝ ի սիդա. մի ուրիշ մեկնիչ էլ, այս բառը բացատրելով, գրել է՝ ի բուտ վառ (վառած կիր). որ յետոյ շփոթուելով դարձել է ի բուրվառ, որով եւ ձեւացել է սիդա բուրվառ անգոյ իմաստը» (ՀԱԲ, 4, 212): Բառը սիդայ եւ սիդու - բուրվառ ձեւով ունի Երեմիա Մեղրեցին (Մեղրեցի, 285):

Այսինքն՝ կարող ենք ասել, որ սիդա բառի բուրվառ նշանակութիւնը կեղծ ստուգաբանութեան հետեւանք է:

Սիւնհոդոս.- ասորերէն sunhodos բառից փոխառեալ՝ եկեղեցական մեծ ժողով նշանակութեամբ: Ասորերէն բառն էլ փոխառուած է յունարէնից՝ σὺνοδος: ՆՀԲ-ն բառը բացատրում է. «Որպէս թէ ճանապարհակցութիւն. ուղեկցութիւն. ի միասին եկաւորութիւն. միաբանութիւն. համահաւաքումն. գումար. մանաւանդ ժողով (մեծ)» (ՆՀԲ, Բ, 717): ՆՀԲ-ն եւ ՀՀԲ-ն բառը համարում են յունական փոխառութիւն, մինչդեռ Աճառեանը այն համարում է ասորական փոխառութիւն՝ ի հազագի պատճառով, որ չկայ յունարէնում, բայց կայ ասորերէնում (ՀԱԲ, 4, 222): Զահուկեանի ո՛չ յունական, ո՛չ էլ ասորական փոխառութիւնների ցանկերում այս բառը չկայ:

Բերենք օրինակներ մեր մատենագրութիւններից:

«...զի նա էր մայր եկեղեցեացն, եւ ի տեղի լեալ նախնեացն ժողովոց սիւնհոդոսին» (Բուզանդ, 63):

«...եւ եղեւ ժողով եպիսկոպոսացն սիւնհոդոսին նահանգին Կեսարու առանց հայրապետին» (Բուզանդ, 191):

Սիւնհոդոս բառը փոխառութեամբ անցել է շատ լեզուների՝ լատ. synodus, գերմ. Synode, ռուս. синодъ: Վերոթուարկեալ լեզուները բառը փոխառել են յունարէնից<sup>3</sup>:

Սիւնոդը բարձրաստիճան հոգեւորականների ժողով է: Ռուսաստանում այն ստեղծուել է 1721-ին՝ որպէս Ռուս Ուղղափառ Եկեղեցու բարձրագոյն մարմին՝ Սրբազան սինոդ: Արեւելեան Հայաստանը Ռուսաստանի տիրապետութեան տակ անցնելուց յետոյ (1828 թ.) ստեղծել է Սուրբ Էջմիածնի սինոդ (1836 թ.), որ Ամենայն Հայոց կաթողիկոսի նախագահութեամբ կառավարում էր ռուսահայերի եկեղեցական-վարչական գործերը: Այն գոյատեւել է մինչեւ 1917 թ.:

Այս ընթացքում բառը երկրորդ անգամ է փոխառուել, այս անգամ՝ ռուսերէնից:

Սրովբէ (սերովբէ, սրոբէ, սերովբիմ, սերապիմ).- բառը ասորերէն՝ srafe բառից է՝ առաջին կամ երկրորդ կարգի հրեշտակ իմաստով: Ասորերէն բառն էլ վերցուած է եբրայերէն serafim բառից՝ այրուող նշանակութեամբ: Այդ պատճառով է, որ մեր մատենագիրները յաճախ բերում են այդ բացատրութիւնը. օրինակ՝ «Սերովբէն անունն որ թարգմանի յեբրայեցւոցն ի մերս, կիզիչ կամ ջեռուցիչ»<sup>9</sup>:

Այս արմատից կազմուած բառերից են՝ սրովբէաբնակ, սրովբէագաւիթ, սրովբէագոչ, սրովբէագումար, սրովբէագունդ, սրովբէախումբ, սրովբէածածուկ, սրովբէական, սրովբէամաքուր, սրովբէաման, սրովբէանշան, սրովբէապահ, սրովբէապահակ, սրովբէաջոկ, սրովբէասարսա (սրովբէանման), սրովբէասարսափ, սրովբէասացիկ, սրովբէասպաս, սրովբէատես, սրովբէատիպ, սրովբէափակ:

Սրովբէն մովսիսական, յետոյ էլ քրիստոնէական կրօնի մէջ առաջին դասի հրեշտակների անուանումն է, որոնք ունեն վեց թեւ. «Նրա (Տիրոջ - Ս. Պ.) շուրջը սերովբէներ կային, որոնցից իւրաքանչիւրը վեց թեւ ունէր. երկուսով իրենց երեսներն էին ծածկում, երկուսով իրենց ոտքերը, եւ երկուսով էլ թռչում էին» [Ես. 2]: «Ի յեբրայեցի լեզու՝ հրեղէն բերանք թարգմանին սրոբէք» (ՆՀԲ):

Սրովբէ բառը քերովբէ բառի ազդեցութեամբ դարձել է սերովբէ, եւ վերջինս աւելի յաճախական գործածութիւն ունի:

Քահանայ.- բառը փոխառութիւն է ասորերէն kahna ձեւից. բուն արմատը համարուում է kvn, որն ունի ոտքի վրայ կանգնել, ծառայել (Աստուծոյ) իմաստը: Սեմական միւս լեզուներում եւս հանդիպում է՝ եբր. kōhēn, արաբ. Kahin հմայող, կախարդ, բախտնագուշակ (ՀԱԲ, 4, 540): Բառը բացատրուում է. «Երէց. աւագն ի պաշտօնեայ Տեառն՝ օծեալ, քաւիչ ժողովրդեան» (ՆՀԲ, Բ, 967): Օրինակ՝ «...զի ամենայն քահանայից ուսոյց առնել հանդերձ զինուորաց» (Բուզանդ, 223): «Յաղագս ... Վրթանայ մեծի քահանայի որդւոյ Գրիգորի» (Բուզանդ, 2): «Զեպիսկոպոսս եւ զքահանայս Հարկաց պատճառաւ կապեալ յերկիրն Պարսից տայր տանել» (Ստրեմացի, 301):

Այս արմատից են՝ քահանայագոյն, քահանայագործ, քահանայագործել, քահանայագործութիւն, քահանայազարդ, քահանայաթաղ, քահանայաձեւ, քահանայապետ, քահանայապետագոյն, քահանայապետապետ, քահանայապետութիւն, քահանայութիւն: Կան չժխտական մասնիկով կազմուած ձեւեր՝ չքահանայ, չքահանայապետ, որ տրւում են անարժան քահանաներին: Օրինակ՝ «Այդ ամբարիշտ ու չքահանայապետ Յասոնն այնպէս եռանդագին աշխատեց, որ նրա ծայրայեղ մոլորութեան պատճառով այլազգութեան

եւ հեթանոսութեան սկիզբ դրուեց» [Բ Մակ. 7 13]:

Քահանան, ըստ Հին Հրեաների, դեւտական ցեղից ընտրուած անձ էր, որ կատարում էր բոլոր կրօնական արարողութիւնները: «Քահանայից գործն էր զոհերու մատակարարութեան եւ տաճարին սպասաւորութեան հետ միանգամայն ժողովրդեան դաստիարակութեան հոգ տանել եւ անոնց դատերը տեսնել, ինչպէս նաեւ քննել բորոտութեան տեսակները, կին արձակելու դատերը, նախանձաւորութեան ջուրերն, ուխտեր, օրինաց եւ անմաքրութեան պատճառներն, այլովքն հանդերձ» (ԲՍԳ, 567): «Քահանաները պատերազմի ժամանակ պարտաւոր էին հնչեցնել փողերը, խրախուսել զօրքին» [տե՛ս Թիւ. Ժ 8-9]: Քրիստոնէական Եկեղեցիներում քահանաները կատարում են բոլոր արարողութիւնները, բացի ձեռնադրութիւնից: Հայերէնի ժողովրդախօսակցական տարբերակներում քահանային անուանում է նաեւ՝ տէր-տէր, երէց, տէր, պապ, աղեր:

Քահանայ տերմինից կազմուած քահանայապետ բառը գործածուում է ոչ միայն որպէս քահանաների դասի գլուխը, այլեւ տրւում է Քրիստոսին:

Քաղդէայ (քաղէայ).- փոխառութիւն է ասորերէն xaldāyā բառից, որ նշանակում է հմայող, գուշակ աստղահմայ մոգ (ՀԱԲ, 4, 543): Բառը ծագում է քաղդէացիների անուանումից: Քաղդէացիները ապրում էին Հարաւային Միջագետքում՝ Եփրատից դէպի արեւելք, ինչպէս նաեւ Բաբելոնում: Նրանք յայտնի էին իրենց աստղագուշակութեամբ ու մոգութեամբ: Նոյնիսկ յոյները եւ շրջապատի միւս ազգերը նրանցից էին սովորել աստղագուշակութիւն եւ մոգութիւն: Բառի առաջնային նշանակութիւնը հէնց քաղդէացի է, աւելի ուշ, բառի մաստի նեղացման հետ կապուած, այն ձեւք է բերել աստղահմայ իմաստը: Օրինակ՝ «Կոչեցէք զգէտս եւ զմոգս եւ

զկախարդս եւ զքաղղեայս՝ պատմել թագաւորին զերազ իւր: Մտին առաջի իմ զէտք, եւ մոզք, եւ իղձք, եւ քաղղեայք» [տե՛ս Դան. Բ 2]: Այս արմատից էր՝ քաղղեայք - ուսումն եւ աղանդ քաղղեայց եւ քաղղեայք - ուսող զաղանդն քաղղեայց կամ քաղղեայց բառերը (ՆՀԲ, Բ, 971): Բառը հետագայում դուրս է եկել գործածութիւնից:

Քարոզ.- փոխառութիւն ասորերէն kārōzā բառից՝ մուսէտիկ, բարձրաձայն աղանակող կամ յայտարարող նշանակութեամբ (ՀԱԲ, 4, 563): Ըստ ՆՀԲ-ի՝ բառը բազմիմաստ էր եւ ունէր հետեւեալ իմաստները՝ ա. երածիշտ, նուագածու, բ. բան սարկաւագի ի ժամասացութեան իբր ազդարարողի, գ. ներքողեան, գանձ տօնից, երգ, դ. վարդապետութիւն, բացատրութիւն եւ ազդումն, յայտարարութիւն: Վերջին իմաստի համար նշուում է՝ «աւանդութիւն քարոզ ասի՝ քարոզութիւն եւ ճառ վարդապետական, ըստ այսմ՝ ի յետին գիրս գրի՝ Եփրեմի քարոզ, քարոզ Վարդանայ» (ՆՀԲ, 2, 999):

Բերենք օրինակներ. «Կրթեաց քարոզովքն եւ մարգարէիւք իբրեւ կաթամբ» (Եզնիկ, 231): «Արձակեալ քարոզս բազումս՝ քարոզել (նոյն տեղում, 266):

Քարոզը քրիստոնէական հաւատի տարածման, կրօնախրատական պատուիրանների հրապարակային ուսուցումն է: Վաղքրիստոնէական շրջանում քարոզ ասելով՝ հասկացել են նաեւ քրիստոնեաներին յղուած թղթերը, իսկ աւելի ուշ՝ ճառերը: Քարոզը տարբերուում է ճառերից ու թղթերից նրանով, որ այստեղ կարեւորուում է ոչ այնքան կրօնադաւանաբանական հարցերի արծարծումը, որքան այն ժողովրդին հասկանալի դարձնելն ու քրիստոնէական գիտակցութեան ամրապնդելը, ինչպէս նաեւ եղել է հեթանոսութեան դէմ մղուող պայքարում հիմնական զէնքը: Քրիստոնէութեան ընդունումից յետոյ հետագայ մի քանի դարերը հռչա-

կուել են իրենց կենդանի քարոզխօսութեամբ ընդդէմ հեթանոսութեան ու զանազան աղանդների:

Քարոզը հիմնուում է Աստուածաշնչի, մասնաւորապէս՝ Նոր Կտակարանի վրայ: Այսպէս, Քրիստոսը առաքելայններին պատուիրում է քարոզելով սովորեցնել նոր կրօնը. «Եւ ասէ ցնոսա՝ Երթայք յաշխարհ ամենայն, եւ քարոզեցէք զաւետարանն ամենայն արարածոց» [Մարկ. ԺԶ 15]: Քրիստոնէութեան սկզբնական շրջանում քարոզելը եւ աւետարանելը նոյնացուել են, սակայն աւելի ուշ դրանք իմաստային տարբերակման են ենթարկուել. աւետարանելը նշանակում է Աւետարանը քարոզել, իսկ քարոզելը փոխել է իր գործառնական նշանակութիւնը. այն ունի բանաւոր կամ գրատր որեւէ գաղափար տարածել իմաստը: Քարոզը, ըստ Սուրբ Գրքի, պէտք է ասուի բարձր տեղից. «Եւ ի գլուխս պարսպաց քարոզի, եւ առ դրունս հզօրաց յաճախէ, եւ ի դրունս քաղաքաց համարձակեալ խօսի» [Առակ. Ա 21]: Այն պէտք է լինի հրապարակային. «Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ի լեառն. եւ իբրեւ նստաւ անդ, մատեան առ Նա աշակերտք Նորա. եւ բացեալ զքերանն իւր ուսուցանէր ցնոսա եւ ասէր» [Մատթ. Ե 1-2]: Քարոզը, նուիրուած լինելով սուրբգրային որեւէ ընթերցուածի, անդրադառնում է նաեւ տուեալ ժամանակի հարցերին, այն ուղղուած է տուեալ ժամանակի ունկնդիրին, այդ պատճառով էլ ձեռք է բերում արդիական հնչեղութիւն եւ տարբեր նրբերանգներ:

Քարոզը նաեւ եկեղեցական մատենագրութեան ժանր է: Հայերէնում այն յայտնի է նաեւ ճառ անուանումով: Այն ունեցել է աստուածաբանական, բարոյադաստիարակչական, խրատական, ջատագովական բնոյթ: Հայկական քարոզգրութիւնն սկսուել է Ե դարից: Քարոզներից կազմուել են ժողովածոներ՝ քարոզգրքեր: Առաջին քարոզգրքեր են համարուում Գրի-

գոր Լուսաւորչին վերագրուող Յաճախապատում ճառքը եւ Յովհաննէս Մանդակունուն վերագրուող Ճառքը<sup>10</sup>:

Քարոզ բառով արտայայտուում է հայ հոգեւոր երածշտութեան ժանրերից մէկը:

Քարոզ բառով կազմուած դարձուածքներից են՝ քարոզ կարդալ (գլխին քարոզ կարդալ), քարոզ տալ (որեւէ գաղափարի օգտին խօսել, համոզել):

Քերովբէ (քերով, քերոբ, քրովբէ, քերուբ, քորբիմ, քերովբիմ).- ասորերէն krōwā բառից փոխառեալ, որն էլ եբրայերէն krūb, յոգն. kārūbīm - քերովբէ բառից է փոխառեալ: Նշանակում է՝ սերովբէների յաջորդ կարգի հրեշտակներ (ՀԱԲ, 4, 573): Փոխառութեամբ անցել է քրիստոնեայ շատ ժողովուրդների՝ լատ. cherub, cherubim, ֆրանս. chruubin: ՆՀԲ-ի բացատրութեամբ՝ «վերին դաս զուարթնոց զկնի Սրովբէից, քառակերպեան երեւել ի տեսիլս, եւ քառաթեւ եւ բազմաչեայ հրացայտ. եւ նկար կամ քանդակ դրուագաց նոցա ի նոյն նմանութիւն. ասի եւ զբանսարկուն, որ երբեմն գլուխ էր հրեշտակաց» (ՆՀԲ, Բ, 1004): Այսինքն՝ այս անուանումը տրուել է նաեւ սատանային (բանսարկուն), որ ժամանակին հրեշտակների դասին էր պատկանում: Քերովբէները Հին Կտակարանում մարդկային կերպարանքով ներկայացուած հրեշտակներ էին, որոնք ունէին թեւեր եւ բազմաչեայ էին. նրանք կատարում էին Աստուծոյ բոլոր հրամանները եւ օրհնում նրան: Քրիստոնէական Եկեղեցին նրանց դասում է հրեշտակների ինը դասի բարձրագոյն տեղում: Նրանք միշտ յիշուում են սերովբէների հետ: Ըստ Հին Կտակարանի՝ քերովբէն տեսիլքում երեւացել է Եզեկիէլ մարգարէին մարդու, եզան, առիւծի եւ արծուի կերպարանքով: Քերովբէների պատկերը հրեաները հաւանաբար վերցրել էին նիւնուէական քանդակներից, որոնք պատկերում էին թեւաւոր առիւծներ եւ մարդու գլխով եզներ:

Քերովբէ բառից բառիմաստի նեղացմամբ առաջացել է Քերոբ անձնանունը:

Բերենք օրինակներ. «Եւ ելին փառքն Տեառն ի միջնօդոյ տաճարին, եւ նստան ի վերայ քերովբէիցն: Եւ ամբարձին քերովբէքն զթեւս իւրեանց, եւ վերացան յերկրէ առաջի իմ» [Եզեկ. Ժ 18-19]: «Եւ յայտնեցայց քեզ անտի, եւ խօսեցայց ընդ քեզ ի վերուստ ի քաւութեանէ անտի, ի միջոյ երկուց քերովբէիցն՝ որ իցեն ի վերայ տապանակին վկայութեան...» [Ել. ԻԵ 22]:

Քուեայ (քուէ, քույ, քեայ, քույ).- Հայերէնը փոխառել է արամերէն kuwy բառից, որն էլ, իր հերթին, փոխառել է յունարէն κυβεία- խորանարդ, վէգ բառից (ՀԱԲ, 4, 590): Իր նախնական իմաստով բառն ունեցել է կախարդի հմայական քար, ապա խաղալու վէգ եւ խորանարդ նշանակութիւնները, որից՝ քուէհարցութիւն եւ քուական բառերը: ՆՀԲ-ում բառի բացատրութիւնը հետեւեալն է. «նշանակ բախտի կամ ընտրութեան՝ վիճակ եւ խիճ կամ քար վասն խաղալոյ» (ՆՀԲ, Բ, 1011): Օրինակներ՝ «Եւ զգինի եւ զարբեցութիւն ընկալաւ սիրտ ժողովրդեան իմոյ: Ի քուեայս հարցանէին, եւ զաւագանօք նորա պատմէին նմա» [Ովս. Դ 11-12]: «Թերեւս ճանաչել կարասցուք զղիւթ քուէիցն զկախարդն» (Բուզանդ, 214): «Եւ ինքն անցեալ ըստ ուղին՝ իջանէր ի հմայս քաղղեութեան, զքուէս հարցանէր» (Բուզանդ, 213): Հետագայում բառը ենթարկուել է իմաստափոխութեան: Նրա առաջնային իմաստը դարձել է քուէարկութեան ժամանակ յօգուտ կամ ի վնաս մէկի տրուած ձայն, որեւէ առարկայ (թերթիկ, առարկայ), որով քուէարկում են: Քուէ բառի այս իմաստափոխութիւնն ունի իր հիմքը: Հին Յունաստանում ընդունուած էր ընտրութիւններն անցկացնել հրապարակային ձեւով. դրուում էր երկու տակառ, որոնց մէջ ընտրողները գցում էին սեւ կամ սպիտակ խիճ-քուէն (դրանք հաւանաբար ու-

նեցել են խորանարդի ձև), այսինքն՝ քուէտրկում էին: Ի հարկէ, հետագայում խիճ-քուէով չէին քուէարկում, սակայն մնացել են սեւ քուէ եւ սպիտակ քուէ կապակցութիւնները՝ դէմ կամ կողմ նշանակութիւններով:

Քուրմ.- ասորերէն kūrma բառից փոխառեալ՝ քահանայ նշանակութեամբ (ՀԱԲ, 4, 596): Ըստ ՆՀԲ-ի՝ «չքահանայ՝ պաշտօնեայ կոոց» (ՆՀԲ, 2, 1013): Օրինակ՝ «...որք էին տոհմք եւ ազգք աշխարհակերք ժանտագործք քրմացն» (Քուրման, 6):

Բառը աւելի ուշ ձեռք է բերել փոխաբերական իմաստ՝ որեւէ բանի անձնութեամբ անուանուած անձ:

**Ծ Ա Ն Օ Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր**

1. Այս մասին ուշագրաւ տեղեկութիւններ է յայտնում Հ. Մարտիրոսեանը «Հայաստանը եւ աշխարհարարման մասին հնագոյն պատկերացումների ակունքները» յօդուածում (Աստուածաշնչական Հայաստան, Եր., 2005, էջ 53-63)՝ վկայակոչելով Եզեկիէի մարգարէութիւնը [Եզեկ. ԻԸ 13-16] եւ Հ. Ղեւոնդ Ալիշանի վկայութիւնները (Ղ. Ալիշան, Հայաստան առաջ քան զիհնէն Հայաստան, Վեներտիկ-Ս. Ղազար, 1904, էջ 11). Ան գտնում է, որ «...եղեմը Մեծ Հայքի տարածքն է»:
2. Այս մասին աւելի մանրամասն տե՛ս Յ. Ս. Անասեան, Հայ համաբարբառային գրականութիւնը եւ հայ մատենագրութեան համաբարբառը, «Էջմիածին», 1971, թիւ 11. Հ. Էսապալեան, «Հանդէս ամսօրեայ» 1935, էջ 571-596:
3. Ս. Եփրեմի Մատենագրութիւնը, հտ. Բ, Վեներտիկ-Ս. Ղազար, 1836, էջ 431:
4. Մ. Թրմանեան, Ազգասպատում, հտ. Ա, Ս. Էջմիածին-Վաղարշապատ, էջ 296:
5. Կանոնագիրք Հայոց, 1964, էջ 425-426:
6. Կ. Դալլաքեան, Նագովրեցի եւ յարակից հարցեր, ՊԲՀ, 2007, էջ 186-191:
7. Գ. Տաթևացի, Քարոզգիրք, Ամարան հատոր, 1741, էջ 572-573:
8. М. Фасмер, Этимологический словарь русского языка, М., том 3, 1987, ст. 633.

«Христианство» Энциклопедический словарь, М., 1995, ст. 573.

9. Գ. Տաթևացի, Առյճ տեղում, էջ 566:
10. ՔՀ հանրագիտարան, էջ 1055:

**Հ Ա Ս Ա Ո Տ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր**

Ալիշան - Հ. Ղ. Ալիշան, Հայոց հին հաւատքը կամ հեթանոսական կրօնը, Եր., 2002 (արեւելահայերէնի վերածեց Վ. Գ. Բարսեղեանը):

ԱՀԲԲ - Է. Աղայեան, Արդի հայերէնի բացատրական բառարան, հտ. 1-2, Եր., 1976-1978:

ԲՍԳ - Բառարան Սուրբ գրոց, Կոստանդնուպոլիս, 1881:

Բուզանդ - Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:

Եզեկի - Եզեկայ Կողբացոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վեներտիկ-Ս. Ղազար, 1826:

Եղիշէ - Եղիշէի Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմի, Եր., 1957:

Խորենացի - Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն հայոց, Տիփլիս, 1913:

ՀԱ - Հանդէս ամսօրեայ:

ՀԱԲ - Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հտ. 1-4, Եր., 1971-1979:

ՀԲԲ - Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, Եր., 1944-1945:

ՀԼՊ - Հր. Աճառեան, Հայոց լեզուի պատմութիւն, հտ. 1-2, 1940-1951:

ՀՀԲ - Բառգիրք հայկազեան լեզուի, Վեներտիկ-Ս. Ղազար, 1749:

Մեղրեցի - Երեմիա Մեղրեցի, Բառգիրք հայոց, Եր., 1975:

Յովհաննիսեան - Լ. Յովհաննիսեան, Գրաբարի բառապաշարը (Ե դար), Եր., 2006:

ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վեներտիկ-Ս. Ղազար, 1836-1837:

Ջահուկեան - Գ. Ջահուկեան, Հայոց լեզուի պատմութիւն. Անխագրային ժամանակաշրջան, Եր., 1987:

ՊԲՀ - Պատմա-բանասիրական հանդէս:

ՔՀ - Քրիստոնէայ Հայաստան (հանրագիտարան), Եր., 2002:

**ԳՈՂԹԱՆ ԵՐԳԵՐ ԵՒ ԱՐԻՍՏՈՆ ՓԵՂՂԱՑԻ**

**Գեորգ Սադոյեան**

Մեզ հասած Գողթան երգերը իրենց փոքր ծաւալի մէջ հետազօտութեան համար մեծ նիւթ են պարունակում: Բացի գրական-բանաստեղծական հայերէն հնագոյն պատառիկները լինելուց, Գողթան երգերը անփոխարինելի են զրաբար ու բանահիւսութիւն, հայոց մշակոյթ ու պատմութիւն ուսումնասիրողների համար:

Հետաքրքրական է, որ Մովսէս Խորենացու աւանդած հատուածների հիմնական մասը Արտաշէս արքայի վէպից է<sup>1</sup>, ինչից կարող ենք եզրակացնել, որ՝

ա. կա՛մ Խորենացին քաջածանօթ է եղել յատկապէս այս վէպին,

բ. կա՛մ յիշեալ երգերը սրտամօտ են եղել Քերթովհազօրը, որ առաւելաբար սրանք է մէջբերել՝ միւսներն աչքաթող անելով:

Խօսքը ա. եւ բ. կէտերում կառուցեցինք կամ-ով, չնայած երկուսը կարող են իրար չհակասել եւ անգամ միաւորուել՝ Խորենացուն քաջածանօթ եւ սրտամօտ են եղել Արտաշէսի երգերը: Յատկապէս Տորք Անգեղի եւ պարսից առասպելների մասին

խօսելիս Խորենացին բացայայտօրէն ցոյց է տալիս իր ճաշակը եւ նիւթն ընտրելու սկզբունքները: Պարզ է, որ Արտաշէսի երգերը գրքում տեղ չէին գտնի, եթէ չլինէր Խորենացու համապատասխան վերաբերմունքը: Նոյնի օգտին է Պատմութեան Ա. գրքի հետեւեալ հատուածը. «Յայտնեն զայս ճշմարտապէս<sup>2</sup> եւ թուելեացն երգք, զոր պահեցին ախորժելով, որպէս լսեմ, մարդիկ կողմանն գինեւէտ գաւառին Գողթան. յորս շարին բանք երգոցն զԱրտաշէսէ եւ զորդուց նորա...»<sup>3</sup>:

Ընդհանրապէս Արտաշէսի պատմութիւնը շարադրելիս Խորենացին երեք հիմնական աղբիւր է օգտագործում. «Եւ զայս մեզ ստուգապէս պատմէ Ողիւմպ քուրմ Հանույ, գրող մեհենական պատմութեանց, եւ զայլ բազում գործս՝ զոր ասել կայ մեզ առաջի, որում եւ Պարսից մատենանքն վկայեն<sup>4</sup> եւ Հայոց երգք վիպասանաց»<sup>5</sup>: Եւ միայն Արտաշէսի մասին պատմութիւնների վերջում Խորենացին յիշում է մի նոր աղբիւր՝ Արիստոն Փեղղացուն. «Քեղեցիկ իմն պատմէ եւ Արիստոն Փեղղացի յաղազս մահուանն Արտաշէսի: ...Ընդ այն ժամանակս առաքեաց զօր ծանր զկողմամբ Ասորեստանի. եւ մերոյն Արտաշէսի հրամայեաց երթալ ի Պարսս հանդերձ

1 Բացառութիւն են Վահագն Վիշապաքաղի եւ Վարդգէս Մանկան երգերը: Կարելի է կարծել, որ Վարդգէսին առնչուող տողերը կարող էին յարակցուած լինել Արտաշէսի վէպին: Իսկ աւելի հաւանական է, որ եղել է Հայոց արքաների գուսանական մի պատմութիւն, ուր պատշաճ հերթականութեամբ պիտի հանդէս գային բոլոր երեւելի դէմքերը: Չէ՞ որ գուսան-գովասանի (այս բառի համար տե՛ս Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հտ. Դ, Եր., 1979, էջ 629-630) բուն գործը հէնց այդ էր՝ անտել պալատում եւ երգել թագաւորի գովքը: Ըստ էութեան՝ պէտք է ընդունել, որ Գողթան գուսանի գուսանները, փաստօրէն, այդ պալատական երգիչ-բանաստեղծներն էին:

2 Այս ճշմարտապէս եւ յաջորդ հատուածում հանդիպող ստուգապէս արտայայտութիւնները մատուցում են, որ Պատմագիր օգտագործած աղբիւրները նոյնական են եղել, եւ Խորենացին դրանք մանրամասնութեամբ համեմատել է:

3 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիփլիս, 1913, էջ 84

4 Չենք կարող չընդունել բուն գիւթից եւ չնկատել, որ Խորենացին հաւանօրէն տիրապետել է նաեւ պարսկերէնին:

5 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 176